ՊԱՐՍԱՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՂՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Հին պարսկական Պարսան (հայկական աղբյուրներում նաև՝ Պարսք), որից ծագում է հունարեն Պերսիսը[1], Աքեմենյան արքայատոհմի բնօրրանն էր: Մ. թ. ա. II–I հազարամյակների սահմանագծին պարսկական ցեղերն աստիճանաբար բնակություն են հաստատում բնիկ էլամական տարածքներում: Մասնագիտական գրականության մեջ Աքեմենյանների նախնիների՝ Աքեմենի և Չիշպիշի նստավայրը համարվել է Սուզա քաղաքից 100 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող Մասջիդ-ի Սուլեյմանե հնավայրը[2], սակայն հայտնի հնագետ Դ. Ստրոնախի կարծիքով՝ Մասջիդ-ի Սուլեյմանեն թվագրվում է մ. թ. ա. V դար– մ. թ. II դարի կեսերի միջև ընկած ժամանակաշրջանով[3]: Ներկայումս ընդունելի է այն տեսակետը, որ Մասջիդ-ի Սուլեյմանեի հուշարձանը տաճարային համալիր է և վերագրվում է վաղ սելևկյան դարաշրջանին[4]:

Աքեմենյան թագավորներից առաջինը, որը հիշատակվում է Պարսումաշի (Պարսուաշի)[5], այսինքն՝ Պարսայի թագավոր, Կյուրոս Ա-ն[6] է: Իսկ Կյուրոս Բ-ն

---

[1] Ll. Llewellyn-Jones. The Achaemenid Empire.– King of the Seven Climes. A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE), ed. by Touraj Daryaee, Ancient Iran Series, vol. IV, Jordan Center for Persian Studies, 2017, p. 65.

[2] R. Ghirshman. Masjid-i-Solaiman, résidence des premiers Achéménides.– "Syria", vol. 27, 1950, p. 205–220; *Նույնի* 'La civilisation achéménide et l'Urartu, A Locust's Leg. Studies in honour of S. H. Taqizadeh. London, 1962, pp. 85–88.

[3] D. Stronach. Achaemenid Village I at Susa and the Persian Migration to Fars.– "Iraq", vol. 36, № 1/2, 1974, pp. 239–248.

[4] М. А. Дандамаев. Политическая история Ахеменидской державы. М., 1985, с. 6.

[5] *Ասսուրական և ուրարտական աղբյուրներում հիշատակվող Պարսուաի տեղադրության տարբեր տեսակետների մասին մանրամասն տե՛ս* Э. Грантовский. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с. 134 и сл. *Նշենք նաև, որ Պարսա երկիրը չի հիշատակվում Ավեստայում (տե՛ս* И. М. Оранский. Введение в иранскую филологию. М., 1960, с. 60; F. Grenet. Zarathustra's Time and Homeland: Geographical Perspectives.– The Wiley Blackwell Companion to Zoroastrianism, ed. By M. Stausberg, Y. Sohrab-Dinshaw Vevaina, Chichester, UK, 2015, pp. 21–29):

[6] E. F. Weidner. Die älteste Nachricht über das persische Königshaus. Kyros I. ein Zeitgenosse Aššurbânaplis. - "Archiv für Orientforschung", Bd. 7, 1931–1932, SS. 1–7.

«Բաբելոնյան գլանում» Անշանը հիշատակում է որպես իր տոհմի քաղաքը[7]՝ մասնագիտական գրականության մեջ համարվելով, այսպես կոչված, Անշանյան կայսրության հիմնադիրը[8]: Է. Հերցֆելդը վաղուց է նկատել, որ Անշանը և Պարսումաշը նույն երկիրն են[9]: Այդուհանդերձ, ուսումնասիրողների մեծ մասն Անշանը և Պարսան չեն նույնացնում՝ հենվելով Սինախխերիբի տեղեկությունների վրա, որտեղ երկու երկրները հիշատակվում են առանձին-առանձին[10]:

Հնագիտական պեղումների շնորհիվ պարզվել է Անշանի տեղադրությունը. վերջինս գտնվել է Շիրազից 46 կմ դեպի հյուսիս՝ Թալ-է Մալյանի տարածքում: Այստեղ վաղ իսլամական շրջանում հայտնի էր Āsh քաղաքը, որը պահպանել էր Անշան անունը[11]: Աքեմենյան դարաշրջանում այս տարածքը հայտնի էր Պարսա անվանումով, հետևաբար, Անշանը և Պարսան միևնույն երկրի տարբեր անվանումներն են, այսինքն՝ գոնե մ. թ. ա. VII դարի կեսից Անշանը հնագույն երկրի արխաիկ անվանումն էր[12]: Նշենք նաև, որ Պարսուաշն ու Անշանը մասնագիտական գրականության մեջ համարվել են տարբեր երկրներ, որոնք գտնվել են քաղաքական ընդհանուր իշխանության տակ[13]: Անշանը գտնվել է ներկայիս Ֆարսի տարածքում՝

---

[7] W. Eilers. Der Keilschrifttext des Kyros-Zylinders. – “Festgabe deutscher Iranisten zur 2500 Jahrfeier Irans”. Stuttgart, 1971, S. 156–166.

[8] D. T. Potts. Cyrus the Great and the Kingdom of Anshan.– Birth of the Persian Empire, vol. I, ed. by V. S. Curtis and S. Stewart, London-New York, I. B. Tauris & Co Ltd, 2005, pp. 7–28.

[9] E. Herzfeld. Archaeological History of Iran. London, 1935, p. 26; *Նույնի*՝ Iran in the Ancient East. London, New York, Oxford University Press, 1941, p. 181; *Նույնի*՝ The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East. Wiesbaden, 1968, p. 170. *Հմմտ.* A. T. Olmstead. History of the Persian Empire. Chicago, 1960, p. 34; M. Waters. Parsumaš, Anšan, and Cyrus.– Elam and Persia, ed. by J. Álvarez-Mon and M. B. Garrison, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2011, pp. 285–296; М. А. Дандамаев. *Նշվ. աշխ., էջ 7: Է. Գրանտովսկին հավանական էր համարում, որ ուշ ժամանակաշրջանում են նույնացվել (տե՛ս* Э. Грантовский. *Նշվ. աշխ., էջ 144):*

[10] A. K. Grayson, J. Novotny. The Royal Inscriptions of Sennacherib. King of Assyria (704–681 BC), Part 1, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2012, № 22, p. 182, № 23, p. 199, № 34, p. 223, № 35, p. 231; Part 2, 2014, № 144, p. 194, № 146, p.198, № 230, p. 335; Young T. Jr. Cuyler. The Iranian Migration into the Zagros.– “Iran. Journal of the British Institute of Persian Studies”, vol. 5, 1967, p. 19.

[11] J. Hansman. Anshan in the Median and Achaemenian Periods.– “The Cambridge History of Iran”, vol. 2, ed. by I. Gershevitch, Cambridge, 1985, pp. 25, 34.

[12] М. А. Дандамаев. *Նշվ. աշխ., էջ 7: Հմմտ.* J. Hansman. Anshan in the Median and Achaemenian Periods, p. 33.

[13] J. Hansman. Elamites, Achaemenians and Anshan.– “Iran”, The British Institute of Persian Studies, vol. 10, 1972, pp. 108–109; E. Reiner. The Location of Anšan.– “Revue d’Assyriologie”, 1973, pp. 57–62. *Հմմտ.* М. М. Дьяконов. Очерк истории древнего Ирана. М., 1961, с. 66–67.

Բայդայի շրջանում[14]*: Աքեմենյաններն այստեղ հայտնվել են ավելի ուշ*[15]*: Համեմատության համար նշենք, որ նույն արխաիզմով պայմանավորված՝ Աքեմենյան դարաշրջանի բաբելոնական տեքստերում Հայաստանը կոչվում էր Ուրաշտու, իսկ հին պարսկական արձանագրություններում՝ Արմինա: Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում է Յադայա երկիրը, որը նույն արձանագրության էլամերեն, աքքադերեն, արամեերեն տեքստերում համապատասխանում է Անշանին*[16]*: Սա նշանակում է, որ Յադայան գտնվում էր Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջաններից դուրս, ամենայն հավանականությամբ, Պարսայի արևմտյան հատվածում: Անշանի ու Պարսայի նույնացման պարագայում ժխտվում է նաև նշված երկրներում Աքեմենյանների երկու ճյուղերի զուգահեռ կառավարման վերաբերյալ տեսակետը*[17]*:*

Հարկավ, Անշանի ու Պարսայի նույնացման օգտին կարող են խոսել նաև անտիկ աղբյուրները: Այսպես, բաբելոնական ժամանակագրության մեջ նշվում է, որ Կյուրոս Բ-ն Եկբատանան գրավելուց հետո հարուստ ավարը տանում է Անշան[18]*, այն դեպքում, երբ հույն պատմիչ Կտեսիասը գրում է, որ տարվում է Պասարգադա*[19]*, այսինքն՝ վերջինս համարժեք է Պարսային: Բաբելոնացի պատմիչ Բերոսոսը նույնպես հայտնում է, որ Կյուրոս Բ-ն Բաբելոն է գալիս Պարսայից*[20]*: Հետևաբար, Անշան անվան հիշատակումը բաբելոնական գրականության ավանդույթներով պայմանավորված անաքրոնիզմ է: Կյուրոս Մեծից հետո Աքեմենյան հաջորդ թագավորներն այլևս իրենց չեն հիշատակում որպես Անշանի թագավոր: Անտիկ հե-*

---

[14] J. H a n s m a n. Elamites, Achaemenians and Anshan, p. 120.

[15] E. H e r z f e l d. The Persian Empire, p. 186.

[16] R. K e n t. Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 125; "Les inscriptions de la Perse achéménide", traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Paris, 1997, p. 202; F. M a l b r a n - L a b a t. La version akkadienne de l'inscription trilingue de Darius á Behistun. Roma, 1994, p. 100; "The Bisitun Inscription of Darius the Great", Aramaic Version, Corpus Inscriptionum Iranicarum, Part I, Inscriptions of Ancient Iran. London, 1982, p. 36.

[17] М. А. Д а н д а м а е в. К вопросу о династии Ахеменидов.– «Палестинский сборник», вып. 5. Л., 1960, с. 3–21; D. S t r o n a c h. *Նշվ. հոդվ., էջ 248:*

[18] Mesopotamian Chronicles, by J.–J. Glassner, Society of Biblical Literature. Atlanta, 2004, p. 234.

[19] Ctesias' History of Persia: Tales of the Orient, translated with commentaries by Ll. Llewellyn-Jones and J. Robson. London, New York, 2010, pp. 167–170. *Մ. թ. ա. 550 թ. Աստյուագեսին հաղթելուց հետո Կյուրոս Մեծը կառուցում է Պասարգադայի պալատը: Պասարգադայի [հին պարսկերեն* Pâthragâda *(տե՛ս* Ll. L l e w e l l y n - J o n e s. The Achaemenid Empire, p. 68*)] ավերակները գտնվում են Շիրազից մոտ 96 կմ հյուսիս (տե՛ս* J. H a n s m a n. Elamites, Achaemenians and Anshan, p. 109*):*

[20] The Babyloniaca of Berossus, by S. M. Burstein, Sources and Monographs: Sources from the Ancient Near East, vol. 1, Fascicle 5, Malibu, 1978, p. 28.

ղինակներին անծանոթ է Անշան անվանումը: Այս առումով պետք է մերժել այն թյուր տեսակետը, թե Կյուրոս Բ Մեծը միայն մ. թ. ա. 550 թվականին Աստյուագեսին հաղթելուց հետո է գրավել Պարսան, քանի որ վերջինս ի սկզբանե Կյուրոսի երկիրն էր[21]*:*

Ջ. Քամերոնից սկսած՝ որոշ ուսումնասիրողներ ենթադրել են, որ Կյուրոս Ա-ն - թագավորել է Անշանում և Պարսումաշում, իսկ Արիարամնան ու Արշաման՝ Պարսայում, փաստորեն, Պարսումաշը և Պարսան համարելով տարբեր երկրներ[22]*: Սակայն այս տեսակետն իրավացիորեն մերժվել է հայտնի պատմաբան Ի. Դյանկովի կողմից, քանի որ, ըստ նրա, Պարսումաշը և Պարսան միևնույն երկիրն են*[23]*: Մյուս կողմից էլ՝ վերջինս Անշանը չի նույնացնում Պարսային՝ այն տեղադրելով Էլամի ու Պարսայի միջև: Նրա կարծիքով, այդ երկիրը տեղադրվում է բախտիարների բնակության տարածքում, որտեղ անտիկ աղբյուրները հիշատակում են մարդերուքսերին: Ինչևէ, Ի. Դյանկովը քաղաքական առումով Անշանը և Պարսան նույնացնում է, սակայն այդ երկրները համարում է աշխարհագրական տարբեր հասկացություններ*[24]*:*

Ստորև տեսնենք, թե անտիկ աղբյուրներում ինչ տեղեկություններ կան Աքեմենյան դարաշրջանի Պարսայի մասին: Այսպես, Հերոդոտոսը հայտնում է, որ Դարեհի հայրը՝ Հյուստասպեսը, Պարսայի հյուպարքոսն էր[25]*, սակայն Բեհիսթունի արձանագրությունում Հյուստասպեսը կամ Վշտասպը հիշատակվում է որպես Պարթևքի և Վրկանի սատրապ*[26]*: Ամեն դեպքում Հերոդոտոսի տեղեկությունը հետաքրքիր է այն առումով, որ Պարսան համարվել է առանձին սատրապություն: Համաձայն Պոմպեուս Տրոգուսի՝ Կյուրոս Մեծի ժամանակ Պարսայի կառավարիչն էր Սյուբարիսը*[27]*, ինչը խոսում է Պարսայի վարչական միավոր լինելու մասին: Արիանոսի տեղեկություններից պարզ է դառնում, որ Ալեքսանդր Մակեդոնացու Պարսա ներ-*

---

[21] М. А. Дандамаев. Политическая история Ахеменидской державы, с. 9.

[22] G. G. Cameron. History of Early Iran. Chicago, 1936, pp. 212, 223. *Հմմտ.* J. Hansman. Elamites, Achaemenians and Anshan, p. 109.

[23] И. В. Пьянков. Борьба Кира II с Астиагом по данным античных авторов.– «Вестник древней истории» *(այսուհետև* ՎԴԻ), 1971, № 3, с. 32.

[24] *Նույն տեղում, էջ 33:*

[25] *Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 70:*

[26] R. Kent. *Նշվ. աշխ., էջ* 122, J. M. Cook. The Rise of the Achaemenids and Establishment of their Empire.– “The Cambridge History of Iran”, vol. 2, ed. by I. Gershevitch, Cambridge, 1985, p. 217.

[27] Justin, Cornelius Nepos, and Eutropius, literally translated, with notes and a general index by J. S. Watson. London, 1853, I, 7, p. 9; *տե՛ս նաև* B. Jacobs. Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius’ III. Wiesbaden, 1994, S. 195.

խուժելու ժամանակ վերջինիս սատրապն էր Արիոբարզանեսը[28]: Պերսեպոլիսը և Պասարգադան գրավելուց հետո Ալեքսանդրը Պարսայի սատրապ նշանակեց Թրասաորտոսին[29]: Ռուփոսի տեղեկություններից նույնպես տեղեկանում ենք, որ Պարսան համարվել է սատրապություն: Ռուփոսը Պասարգադքի (հավանաբար, տեղանվան էլամական անվանաձևն է՝ Բատրակատաշ[30]) սատրապ է հիշատակում Օրսինին[31], այսինքն՝ սատրապությունը նշվում է կենտրոնի անունով: Մակեդոնացի աշխարհակալի մահից հետո Պարսան շարունակում էր մնալ սատրապություն[32]:

Ստրաբոնի նկարագրությունից պարզվում է, որ Պարսային արևելքում սահմանակից էր Կարմանիան[33], արևմուտքում՝ Սուսիանան[34], հյուսիսում՝ Մարաստանը[35], իսկ հարավում հասնում էր Պարսից ծոց[36]: Ըստ էության, Ստրաբոնի Կոյլեպերսիսը[37]՝ Խորին Պերսիսը, ընդգրկել է Պասարգադայի և Պերսեպոլիսի շրջանը, այսինքն՝ Աքեմենյանների բուն հայրենիքը:

Բեհիսթունի և այլ արձանագրություններում Պարսան առաջինն է հիշատակվում Աքեմենյան տերության մեջ մտնող երկրների շարքում[38]: Դարեհ Ա-ի համար Պարսան ապստամբ երկիր էր, ինչպես՝ Էլամը, Մարաստանը, Ասորեստանը և

---

[28] A r r i a n. Anabasis Alexandri, with an English translation by E. Iliff Robson, vol. I-II. Cambridge-Massachusetts-London, 1967, III, 18, 2, p. 280.

[29] *Նույն տեղում, 10–11, էջ 284:*

[30] R. H a l l o c k. Persepolis Fortification Tablets. Chicago, 1969, p. 676.

[31] *Ռ ու փ ո ս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը.– Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 573:*

[32] Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVIII, 6, p. 232.

[33] *Հմմտ.* P l i n y. Natural History, vol. II, with an English translation by H. Rackham. Cambridge-Massachusetts-London, 1947, VI, 111, p. 422; *Տե՛ս նաև* Г. М. Б о н г а р д - Л е в и н, М. Д. Б у х а р и н, А. А. В и г а с и н. Индия и античный мир. М., 2002, с. 285–286).

[34] *Ըստ Պլինիոս Ավագի՝ Պարսայի արևմտյան սահմանը հասել է մինչև Միտակենե* (P l i n y. Natural History, vol. I, with an English translation by H. Rackham. Cambridge-Massachusetts-London, 1967, II, 237, p. 362; *հմմտ.* C. M u l l e r. Fragmenta Historicorum Graecorum, vol. I. Parisiis, 1841, Hecat., fr. 184, p. 12), *այսինքն՝ աշխարհագետը Սուսիանան ներառում է Պարսքի մեջ:*

[35] *Պարսայի՝ Մարաստանի հետ սահմանի քննարկումը տե՛ս Հ. Խ ո ր ի կ յ ա ն. Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXX, Երևան, 2016, էջ 68–69:*

[36] С т р а б о н. География в 17 книгах (*այսուհետև՝* С т р а б о н), перевод, статья и комментарии Г. Стратановского. Л., 1964, с. 675–676, 690.

[37] The Geography of Strabo, vol. VII, Books 15–16, with an English translation by H. L. Jones. Cambridge-Massachusetts-London, 1930, XV, 3, 6, p. 164.

[38] R. K e n t. *Նշվ. աշխ., էջ 117, 145, 155:*

այլն[39]: Դարեհի այլ արձանագրություններում Պարսան չի հիշատակվում հպատակ երկրների շարքում, և Աքեմենյան թագավորը թվարկում է Պարսայից դուրս գտնվող ենթակա երկրները[40]: Ըստ Քսերքսեսի արձանագրության՝ Պարսան հպատակ երկրների շարքում չէ[41]: Հարկավ, այս հանգամանքով ընդգծվում էր Պարսայի՝ որպես Աքեմենյան տերության ոստանի նշանակությունը: Դարեհ Ա-ի՝ Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում (DPe) ուշագրավ է արքայի այն հայտարարությունը, որ Աքեմենյան տիրակալը պարսկական ժողովրդի հետ տիրում է թվարկվող նվաճված երկրներին[42]: Անկասկած, Աքեմենյան պետության վարչական բաժանման համակարգում Պարսա-Պարսքը վարչական առանձին միավոր էր, իսկ պարսիկները տիրապետող ժողովրդի իրավունքով պետք է եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ ապահարկ լինեին մյուս հպատակ ժողովուրդների համեմատությամբ: Հետևաբար, Հերոդոտոսի այն տեղեկությունը, թե Պարսան ապահարկ էր[43], այնքան էլ իրականությանը չի համապատասխանում[44]: Տերությունում պարսիկների տիրապետող դիրքի մասին վկայում է նաև Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակի կազմում նրանց առաջինը հիշատակվելը[45]:

Մ. թ. ա. 522–521 թթ. ապստամբ Պարսան լուրջ խնդիրներ ստեղծեց Դարեհ Ա-ի համար[46]: Նրա խոսքերից կարելի է եզրակացնել, որ Պարսան ամբողջությամբ չէր ապստամբել, քանի որ արքայի ենթակայության տակ կար պարսկական զորք՝ պարսիկ զորավարի հրամանատարությամբ[47]: Դարեհ Ա-ի դեմ Պարսայում երկրորդ անգամ Գաումատայից հետո ապստամբում է Վահյազդատա անունով մեկը, ով իրեն հռչակում է թագավոր՝ ներկայանալով որպես Կյուրոսի որդի Բարդիա: Ըստ Բեհիսթունի արձանագրության՝ Պարսայի բանակն անցնում է Վահյազդատայի կողմը՝ դավաճանելով Դարեհ Ա-ին[48]: Ամենայն հավանականությամբ, ապս-

---

[39] *Նույն տեղում, էջ 121:*

[40] *Նույն տեղում, էջ 136–137, 141:*

[41] *Նույն տեղում, էջ 151:*

[42] *Նույն տեղում, էջ 136,* R. Schmitt. Die altpersischen Inschriften der Achaimeniden. Wiesbaden, 2009, SS. 117–118.

[43] Herodotus. with an English translation by A. D. Godley, vol. II, Books III–IV. Cambridge-Massachusetts-London, 1928, III, 97, p. 124. *ԴՈՒՇ.* Ch. Tuplin. The Administration of the Achaemenid Empire.– Coinage and Administration in the Athenian and Persian Empires. – "The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History", Oxford, 1987, p. 138.

[44] J. M. Cook. *Նշվ. աշխ., էջ 241:*

[45] *Հերոդոտոս, IV, 61:*

[46] М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах. М., 1963, с. 263–264; *Նույնի՝* Восстание Вахьяздаты (Из истории народных движений в древней Персии).– ВДИ, 1960, № 1, с. 11–20.

[47] М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах, с. 264–266.

[48] R. Kent. *Նշվ. աշխ., էջ 125–126:*

տամբությունը սկսվել էր մայրաքաղաք Պասարգադայից, սակայն Դարեհ Ա-ին հավատարիմ մնացած պարսկամարական բանակը՝ պարսիկ Արտավարդիյայի գլխավորությամբ, Պարսայի Ռախա քաղաքի մոտ պարտության է մատնում Վահյազդատային: Վերջինս երկրորդ անգամ պարտություն կրելուց հետո գերեվարվում ու սպանվում է Պարսայի Հուվադայչայա քաղաքում[49]*, հավանաբար, Պարսայի արևելյան շրջանում*[50]*:*

Պարսայի էթնիկական կազմի մասին կարևոր են Հերոդոտոսի տեղեկությունները: Հույն հեղինակը հայտնում է, որ պարսկական գլխավոր ցեղերը պասարգադները[51]*, մարափները, մասպերն են, որոնցից առաջիններին էր պատկանում Աքեմենյանների հզոր տոհմը՝ տեղադրվելով Պասարգադայի շրջանում*[52]*: Հերոդոտոսը հիշատակում է նաև պարսկական այլ ցեղերի, որոնցից պանթիալայները, դերուսիները, գերմանիները հողագործներ էին, իսկ դայերը, մարդերը*[53]*, դրոպիկները (=դերբիկներ*[54]*) և սագարտիները՝ վաչկատուն*[55]*: Մարափները*[56] *եղել են, Աքեմենյանների տոհմի հին ճյուղը, մասպերի անունը ծագում է արիմասպների էթնանունից*[57] *կամ նույնանում է Մասաբատիկային*[58]*, պանթիալայները կապում են ժամանակակից*

---

[49] *Նույն տեղում:*

[50] M. A. Д а н д а м а е в. Иран при первых Ахеменидах, с. 187.

[51] *Պտղոմեոսը պասարգադներին սխալմամբ հիշատակում է Կարմանիայի ծովափնյա շրջանում (տե՛ս* Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II. Lipsiae, 1845, VI, 8, 12*):*

[52] R. F r y e. The History of Ancient Iran. München, 1983, p. 89.

[53] *Հավանաբար, մարդերի այն խումբն է, որը հիշատակվում է Արիանոսի կողմից (տե՛ս* Г. М. Б о н г а р д - Л е в и н, М. Д. Б у х а р и н, А. А. В и г а с и н. *Նշվ. աշխ., էջ 286) և կապված է էլամական տեղանուն Մարդաշի հետ (տե՛ս* D. T. P o t t s. Cyrus the Great and the Kingdom of Anshan, p. 23*):*

[54] E. H e r z f e l d. Zoroaster and His World, vol. II. Princeton, 1947, p. 729.

[55] H e r o d o t u s. with an English translation by A. D. Godley, vol. I, Books I–II. Cambridge-Massachusetts–London, 1975, I, 125, p. 164; A Commentary on Herodotus Books I–IV, ed. by O. Murray, A. Moreno. Oxford – New York, 2007, pp. 163–164. *Քսենոփոնը, առանց պարսկական ցեղերի անունները նշելու, գրում է, որ այդ ցեղերը տասներկուսն էին (տե՛ս* X e n o p h o n. Cyropaedia, vol. I, with an English translation by W. M i l l e r. Cambridge–Massachusetts–London, 1960, Loeb Classical Library, I, II, 5, p. 12*):*

[56] *Հմմտ. Մարափիս անձնանունը Էսքիլեսի մոտ (տե՛ս* Э с х и л. Трагедии, в пер. В. Иванова. Персы, 788, с. 39. М., 1989*):*

[57] *Մարափները և մասպերը Հելլանիկոսի մոտ ներկայանում են որպես Կյուրոս Մեծի եղբայրներ (տե՛ս* C. M u l l e r. Fragmenta Historicorum Graecorum. Hellanic., fr. 164, p. 68; J. M a r q u a r t. Untersuchungen zur Geschichte von Eran II.– “Philologus: Zeitschrift fƀr das klassische Altertum”, Supplementband X/1. Leipzig, 1905, S. 137*), այսինքն՝ ցեղերի անվանադիրներ:*

[58] R. F r y e. *Նշվ. աշխ., էջ 89: Մասպերի անունը նաև ժամանակակից Լուրիստանի ցեղային անվանումն է (տե՛ս* E. H e r z f e l d. Zoroaster and His World, vol. II, p. 729*):*

Ֆահլիյունի կամ Ֆահլիյանի հետ[59]*: Դերուսիների անվանումը ևս ունի պարսկական ծագում՝ «ծառ» կամ «երկարակյաց» նշանակությամբ*[60]*: Հերոդոտոսի կողմից նշված ցեղերից առավել հավանական տեղադրություն ունեն և նույնանում են գերմանիները՝ կապվելով Կրմանի հետ*[61]*, որը Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներից հետո անջատվում է Պարսայից*[62]*:*

Պարսայի մասին խոսելիս անհրաժեշտ է նաև նշել, որ Պերսեպոլիս քաղաքի (ժամանակակից Թախտ-ե Ջամշիդը) տեղական անվանումը եղել է Պարսա, որը պահպանվել է էլամական տնտեսական նշանակության վավերագրերում և Աքեմենյան մեկ արձանագրությունում: Սա նշանակում է, որ երկիրը, նրա ժողովուրդը և արքայական նստավայրը կոչվել են Պարսա, որի անունը հույները սխալմամբ տարածել են ամբողջ երկրի վրա՝ գրեթե ողջ Իրանն անվանելով Պերսիս, այսինքն՝ Պարսկաստան[63]*:*

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Պարսան կարելի է համարել Աքեմենյան տերության թիվ մեկ սատրապությունը, որն օգտվում էր որոշակի արտոնություններից: Ամեն դեպքում, Պարսայի էթնիկական կազմի ուսումնասիրությունը վկայում է, որ Աքեմենյանների բուն ոստանը տարածվում էր Պասար-

---

[59] *Պանթիալայների անունը փորձել են տեսնել Պնտինգերյան քարտեզի Պանթյուենե կայարանի (տե՛ս* J. Marquart. *Նշվ. աշխ., էջ 80), Անանուն Ռավեննացու Պաթիենաս (տե՛ս* Ravennatis Anonymi Cosmographia, ed. M. Pinder et Parthey, Berolini, 1860, II, 5, 7, p. 52*) անվանումների մեջ և տեղադրել ներկայիս Միրջան քաղաքի մոտ (տե՛ս* J. M. Cook. *Նշվ. աշխ., էջ 238): Նկատենք, որ Ֆահլիյունի կամ Ֆահլիյանի տարածքում տեղադրվում են Ստրաբոնի պատիսխորները (տե՛ս* Страбон, с. 675*), որոնք համապատասխանում են հին պարսկական Pātišuvariš-ին. բառացի՝ «լեռան արևոտ կողմի երկրի ժողովուրդ կամ մարդիկ», կամ էլ՝ «դեպի արևն ընկած» (տե՛ս* A. Bahadori. Achaemenid Empire. Tribal Confederations of Southwestern Persia and Seven Families. – “Iranian Studies”, vol. 50, № 2, pp. 1–25*): Մեր կարծիքով պանթիալայներն ու պատիսխորները նույն ցեղն էր:*

[60] J. Marquart. *Նշվ. աշխ., էջ 90–91,* E. Herzfeld. The Persian Empire, p. 298. *Դերուսիները նույնացվել են Գեդրոսիա երկրի հետ (տե՛ս* В. В. Бартольд. Сочинения, т. VII. М., 1971, с. 140, 150, 268*), ինչը բացառված չէ, եթե նկատի ունենանք, որ տեղի է ունեցել ցեղային տեղաշարժ:*

[61] E. Herzfeld. *Նշվ. աշխ., էջ 298: Տե՛ս նաև* A. T. Olmstead. *Նշվ. աշխ., էջ 34;* В. В. Бартольд. *Նշվ. աշխ., էջ 140, 150, 268: Մնացած ցեղերի մասին տե՛ս* И. В. Пьянков. Борьба Кира II с Астиагом по данным античных авторов, с. 26–27.

[62] The Babyloniaca of Berossus, p. 28; C. Muller. Fragmenta Historicorum Graecorum. vol. II. Parisiis, 1848, Beros., fr. 14, p. 508; Josephus: The Life. Against Apion, with an English translation by H. St. J. Thackeray, vol. I. London-New York, 1926, I, 153, p. 222; E. Herzfeld. Zoroaster and His World, vol. II, p. 732.

[63] М. Дандамаев. Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения. СПб., 2013, с. 214–215.

գաղայի և Պերսեպոլիսի շրջաններում, ընդ որում՝ Պարսայի ցեղային միավորման օրինակով էր կազմված տերության վարչական բաժանման համակարգը:

ПАРСА В АДМИНИСТРАТИВНОЙ СИСТЕМЕ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

ОГАННЕС ХОРИКЯН

Резюме

Колыбелью династии Ахеменидов была древнеперсидская Парса. Сведения античных и клинописных источников свидетельствуют, что Аншан и Парса идентичны. В ахеменидскую эпоху Парсу можно считать одной из сатрапий империи, однако ахеменидские цари вместе с персидским народом правили над покоренными странами. Парса в системе Ахеменидского государственного административного деления была отдельной единицей, а персы по праву доминирующего народа, если не полностью, то по крайней мере частично были свободны от податей, по сравнению с другими покоренными народами.

PARSA IN THE ADMINISTRATIVE SYSTEM OF ACHAEMENID PERSIA

HOVHANNES KHORIKYAN

Summary

Old Persian Parsa was Achaemenid dynasty cradle. Cuneiform and ancient sources' accounts prove that Anshan and Parsa are identical. In Achaemenid era Parsa can be considered one of the Satrapies of the Empire, but the Achaemenid kings occupied the conquered countries together with the Persians. Parsa was a separate administrative unit in Achaemenid administrative division system, and the Persians, having the right of the ruling nation, were dwelled frees from taxes if not wholly, then partially in comparison with other subject nations.